ք.Երևան, 11 ապրիլի 2014թ.

«Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ-ի մասնակից
պրն Մանվել Տեր-Առաքելյանին
հասցե՝ ք.Երևան, Հյուսիսային պող., տուն 2

==========
==========
==========

==========

==========
==========
==========
==========

Հարգելի պարոն Տեր-Առաքելյան

2011թ-ից ի վեր Ձեր, «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ-ի (ստորև՝ **«Ընկերություն»**) և «Յունիբանկ» ՓԲԸ-ի (ստորև՝ **«Բանկ»**) միջև տեղի ունեցած դատական վեճերը մշտապես ուղեկցվել են այսպես կոչված «սև փիարի» ակցիաներով, որոնք նախաձեռնվել են Ձեր կողմից: Այդ «սև փիարի» ակցիաներն ուղղված են եղել հանրային թյուր կարծիք ձևավորելուն, Բանկի և դատական մարմինների վրա ճնշում գործադրելուն՝ Բանկից անհիմն զիջումներ կորզելու և/կամ դատական գործերով պատասխանատվությունից խուսափելու նպատակով:

Գտնում ենք, որ խոսքի ազատության Ձեր կողմից թույլ տրված չարաշահումները, որոնք կատարվում են դրանց համար պատասխանատվության կանչելու իրավական մեխանիզմների ցածր արդյունավետության պայմաններում, արդեն իսկ վտանգ են ստեղծում թե՛ բանկային և թե՛ դատական համակարգերի բնականոն գործունեության համար:

Բանկը և Բանկի ղեկավարությունը գերազանցապես համբերատար անտեսել են այդ դրսևորումները և շարունակել են վերաբերվել Ձեզ՝ որպես հաճախորդի, պատշաճ հարգանքով՝ պահպանելով քաղաքավարության բոլոր կանոնները: Ավելին՝ չնայած Բանկը չի արժանացել փոխադարձության, Բանկը մշտապես պատրաստ է եղել ձեռք մեկնել Ձեզ և Ընկերությանը՝ հանդես գալով վեճերի կարգավորման կոնկրետ կառուցողական առաջարկներով, որոնք մնացել են անպատասխան, ինչպես նաև առարկայական կերպով արձագանքել է Ձեր բոլոր առաջարկներին՝ պատճառաբանված կերպով մերժելով, իսկ որոշ դեպքերում ընդունելով դրանք և անգամ առաջարկելով ավելի բարենպաստ պայմաններ: Այդուհանդերձ, Դուք նախընտրել եք վեճի շարունակման ճանապարհը:

Ուշագրավ է, որ Դուք և Ընկերության տնօրենությունը մշտապես չափազանց նրբազգաց եք գտնվել Ձեր սեփական անձի նկատմամբ, ընդհուպ մինչև անհիմն կերպով աղմուկ-աղաղակ և գրավոր բողոք եք հարուցել ձեզ (Ձեզ և Ընկերության տնօրենին համատեղ) դիմելիս «ձեր» դերանվան փոքրատառ գործածության առիթով: Այդուհանդերձ, ինչ-ինչ պատճառով, Դուք գտել եք, որ Ձեզ թույլատրելի է ոչ միայն խախտել քաղաքավարության կանոնները և դրսևորել անարգանքի նշաններ, այլ անգամ դիմել բացահայտ հրապարակային վիրավորանքների և զրպարտության:

Ռուսաստանյան ԶԼՄ և ինֆորմացիոն գործակալություն հանդիսացող ՌԵԳՆՈՒՄ ԼԳ-ում 31.03.2014թ-ին հրապարակված Ձեր հարցազրույցում տեղ են գտել բազմաթիվ զրպարտչական և վիրավորական արտահայտություններ, որոնք արատավորում և ոտնահարում են Բանկի և Բանկի ղեկավարության գործարար համբավը, պատիվը և արժանապատվությունը: Այդ հրապարակման հղումը տեղադրել եք Ընկերության ֆեյսբուքյան էջում՝ առանց որևէ վերապահումների, ինչից ենթադրվում է, որ լրագրողական սխալի մասին խոսք լինել չի կարող: Ավելորդ է նշել, որ Ձեր սադրիչ հարցազրույցով անցել եք բոլոր հնարավոր սահմանները:

Ղեկավարվելով «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՌԴ օրենքի 46-րդ հոդվածով, Բանկը երեքշաբթի օրը՝ 15.04.2014թ-ին առանձին գրությամբ պահանջելու է ՌԵԳՆՈՒՄ ԼԳ-ից հրապարակել Բանկի պատասխանը Ձեր հարցազրույցին և նույն օրը զետեղելու է այն համացանցում: Բանկի պատասխանը կից ներկայացնում ենք միայն Ձեր ուշադրությանը Հավելված 2-ի տեսքով՝ չուղարկելով այն սույն գրության այլ հասցեատերերին: Պատասխանում լիարժեք վերլուծվում է Ձեր սուտ հայտարարությունների և վիրավորական վարքագծի իրական բնութագիրը և շարժառիթները:

Միաժամանակ, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածով և ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 152 հոդվածով, պահանջում ենք հրապարակայնորեն հերքել Ձեր կողմից տարածված սուտ տեղեկատվության այն մասը, որն ինքնին կամ՝ հարցազրույցի համատեքստում, արատավորում է Բանկի և Բանկի ղեկավարների գործարար համբավը, պատիվը և արժանապատվությունը, ինչպես նաև հայցել Բանկի և Բանկի ղեկավարության ներողամտությունը: Հրապարակային հերքման և ներողության առաջադրվող տեքստը կից ներկայացնում ենք Հավելված 1-ի տեսքով: Մնացած սուտ տեղեկությունները, որոնց պախարակող բնույթը համեմատաբար դժվար է հիմնավորել, թողնում ենք Ձեր խղճին. ըստ անհրաժեշտության, Բանկն ինքնուրույն հրապարակայնորեն կհերքի դրանք՝ հրապարակելով ճշմարիտ տեղեկությունները:

Նշենք, որ հերքման տեքստից սեփական հայեցողությամբ կարող եք հեռացնել [քառակուսի փակագծերի մեջ զետեղված] այն հատվածները, որոնք պարունակում են բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև հերքման ցանկացած կետ՝ ներկայացնելով Բանկին Ձեր կողմից չհերքվող համապատասխան պնդումների իսկության ապացույցները:

Հրապարակային հերքման և ներողության տարածման սույն գրությամբ ներկայացված պահանջը Ձեր կողմից հոժարակամ չկատարելու դեպքում, Բանկը մտադիր է պահանջել հրապարակային հերքում տարածել և/կամ ներողություն խնդրել դատական կարգով՝ հայցելով նաև պատճառված վնասների հատուցում, և/կամ պահանջել ՌԵԳՆՈՒՄ ԼԳ-ից հրապարակել հերքումը լրատվական գործակալության կամ Բանկի անունից՝ «Զանգվածային լրատվության միջոցների մասին» ՌԴ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն:

Միաժամանակ, հավատարիմ մնալով Բանկի կողմից որդեգրած սկզբունքներին և մշտապես ձգտելով վեր գտնվել անձնական նկատառումներից, պատրաստ ենք ընձեռել Ձեզ Ձեր սեփական սխալներն ինքնուրույն ուղղելու հնարավորություն:

Ուստի հայտնում ենք Ձեզ, որ մինչև երկուշաբթի 14.04.2014թ. աշխատանքային օրվա ավարտն Ընկերության ֆեյսբուքյան էջում ներողության և հերքման հոժարակամ հրապարակման և ՌԵԳՆՈՒՄ ԼԳ-ին (կամ դրա հայաստանյան ներկայացուցչությանը) հերքման և ներողության հրապարակման դիմումի ներկայացված լինելու դեպքում Բանկը չի հրապարակի իր պատասխանը և պատասխանի հրապարակման պահանջ չի ներկայացնի ՌԵԳՆՈՒՄ ԼԳ-ին՝ պայմանով, որ ՌԵԳՆՈՒՄ ԼԳ-ն ոչ ուշ, քան 15.04.2014թ. կկատարի համապատասխան հրապարակումը և Ձեր ու լրատվական գործակալության համապատասխան հրապարակումները կպահպանվեն առնվազն մինչև 2014թ. ապրիլի 30-ը:

Բանկը հորդորում է Ձեզ հետագայում ձեռնպահ մնալ վիրավորական, զրպարտչական և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների տարածումից՝ շարունակելով վեճը բացառապես իրավական դաշտում: Ականջալուր չլինելու և նորանոր սադրիչ փիար ակցիաներով հանդես գալու դեպքում կամ հրապարակային հերքման և ներողության տեքստի վաղակետ հեռացման դեպքում, Բանկն իրավունք է վերապահում հետագայում՝ մինչև 31.03.2015թ. (ըստ ՌԴ օրենսդրության) պահանջել ՌԵԳՆՈՒՄ ԼԳ-ից հրապարակել պատասխանը, ինչպես նաև ձեռնարկել օրենքով սահմանված այլ գործողություններ:

Հարգանքով՝

Վարդան Աթայան
«Յունիբանկ» ՓԲԸ Վարչության նախագահ